ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Արժ. Տ. Հովսեփ Ավագ Քհն. Հակոբյանը ծնվել է Հոկտեմբեր 7, 1950, Էջմիածին քաղաքում, Հայաստան:

1960-62 թվականներին, հաճախել է Էջմիածին քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցին:

1962-ի Սեպտեմբերին ընդունվել է Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1967-ին ձեռամբ Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Հայկազուն Արք. Աբրահամյանի ձեռնադրվում է Սարկավագ:

1968-ին ավարտում է Հոգևոր Ճեմարանը և նույն տարվա Հունիս ամսին նշանակվում Կաթողիկոսարանի քարտուղար:

1974-ի Փետրվարի 16-ին ամուսնանում է Մերի Մանվելյանի հետ:

1974-ի Դեկտեմբերի 22-ին Մայր Տաճարում ձեռնադրվում է ամուսնացյալ Քահանա և նշանակվում Էջմիածին քաղաքի Ս. Հռիփսիմե վանքում իբրև Ծիսակատար:

1977-ին Տեր Հոր ընտանիքը բախտավորվում է արու զավակով:

1978-ի Մայիսին իբրև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ, Տեր Հայրը մասնակցում է Հյուսիսային Ամերիկայի Արևելյան Թեմի Հոգևորականաց Համագումարին:

Ամերիկայից վերադարձին շարունակում է իր ծառայությունը Մայր Տաճարում և նույն թվականի Սեպտեմբեր ամսից նշանակվում Էջմիածին քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու վանահայր:

1979-1993 թվականներին ծավալել է թե՛ շինարարական և թե՛ հոգևոր լայն գործունեություն, պատշաճ մակարդակի հասցնելով եկեղեցու առաքելությունը: Այդ թվականներին Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի հանձնարարությամբ ստեղծում է նախապատրաստական դպրոց բաղկացած 9-14 տարեկան փոքրիկներից ու պատանիներից: Դպրոցի նպատակն էր պատրաստել եկեղեցական արարողություններին որոշ չափով գիտակ պատանիներ Հոգևոր Ճեմարանների համար:

1994-ի Դեկտեմբերին Տեր Հայրը ընտանյոք տեղափոխվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ և 1995-ի Հուլիս ամսից մինչև այսօր շարունակում է իր հոգևոր ծառայությունը Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան Թեմում՝ զբաղեցնելով զանազան պաշտոններ: